№ 115 Օգոստոսի 25 Հինգշաբթի 1883 Օգոստոսի 25 Հինգշաբթի № 115

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր մամուլի համոզմունքը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Արհեստանոցների կարևորութիւն Թիւրքաց-Հայաստանում։

ՄԵՐ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄՈԶՄՈՒՆՔԸ

—

Մի քանի ամիս առաջ այրվեցաւ Թիֆլիսի քաղաքային Դումայի շինութիւնը, և հրդեհի մէջ ոչնչացան դումայի, ուպրավայի և որբերի դատարանի բոլոր, կամ գրեթէ բոլոր գործերը։ Մենք հաղորդեցինք այդ աղետի մասին մեր ընթերցողներին, բայց մեր կողմից ոչինչ դատողութիւն չաւելացրինք այդ տխրալի լուրը հաղորդելու ժամանակ։

Բայց ի՞նչպէս վերաբերվեց դէպի աղետը մեր տեղական ռուս և վրաց մամուլը։

Մեր մամուլի վարմունքը օրինաւոր կերպով գնահատելու համար պէտք է յիշել թէ նոյն մամուլը ինչպէս էր վերաբերվում դէպի մեր լրագիրը, երբ „Մշակը“ յարձակվում էր քաղաքագլուխ Մատինովի դէմ նրա վերջին ընտրութեան ժամանակ։ Մենք Մատինովին և նրա բոլոր արբանեակներին անչարմար էինք համարում քաղաքային պաշտօնների համար, մենք նրանց անցեալ գործունէութիւնը վնասակար էինք համարում,—և ահա այն ժամանակ տեղական „Кавказъ“, „Юридическ. Обозрѣн.,“ „Тифл. Объявл.“ և վրաց „Դրօէբա“ լրագիրները մի կողմից գովասանական յօդուածներ էին գրում ի պատիւ Մատինովի և նրա արբանեակների, իսկ միւս կողմից անխնայ յարձակվում էին „Մշակի“ դէմ, անբարեխիղճ համարելով մեր լրագիրը քաղաքագլխի ընտրութեան հարցի վերաբերութեամբ։ Եւ այդ յօդուածները հրատարակեցին մեր մամուլի ներկայացուցիչները Մատինովի նոյն իսկ ընտրութեան օրը, որպէս զի նպաստեն նրա ընտրութեանը և „Մշակը“ խայտառակեն, ասելով որ մեր լրագիրը իբր թէ անձնական հաշիւներից դրդված միակ է ամբողջ մամուլի մէջ, որ հերքում է Մատինովի անցեալ գործունէութեան հասարակաօգուտ լինելը։

Բայց ահա այրվեցաւ դումայի շինութիւնը իր բոլոր գործերով և թղթերով... Եւ ի՞նչ էք կարծում, ի՞նչպէս վերաբերվեց նոյն մամուլը, որ առաջ Մատինովին գովում էր և մեզ դէմ յարձակվում։ Այդ նոյն մամուլը, նոյն „Кавказъ“, նոյն „Юридич. Обозрѣн.“ և ուրիշները, էլ խօսք չէին գտնում որ յարձակվեն իրանց պաշտպանած Մատինովի և նրա ամբողջ կուսակցութեան դէմ, էլ անվայել կասկածանք չը թողեցին որ չը յայտնէին հրդեհի պատճառների մասին...

Դրանից երևում է ինչ համոզմունքի տէր են մեր մամուլի վարիչները։ Մենք որ յարձակվում էինք քաղաքագլխի դէմ, մենք, մինչև անգամ երբէք չը յայտնեցինք այն կասկածները նրա և նրա արբանեակների դէմ, որ յայտնեցին այժմ, հրդեհից յետոյ այն լրագիրները, որոնք առաջ վրդովվում էին, երբ մենք առաջարկում էինք Մատինովի տեղ ուրիշ մարդուն ընտրել։

Մենք մինչև այժմ լռում էինք հրդեհի և նրանից առաջանալի հետևանքների մասին, բայց այժմ, երբ մեր քաղաքը անխնամ կերպով թողված է, երբ Մատինովի ամիսներով բացակայ է քաղաքից, երբ նրա օգնական Թամամշեվ զբօսնում է արտասահմանում, երբ քաղաքի բոլոր գործերը երեսի վրա թողված են,—այժմ մենք չենք կարող լռել ոչ քաղաքային գործերի մասին, ոչ էլ մեր մամուլի անբարեխղճութեան մասին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Օգոստոսի 20-ին

Իւրաքանչիւր մարդ, ով որ ծանօթ է քիչ շատ գիւղական կեանքին, անպատճառ նկատած կը լինի, որ շինական հասարակութեան տանուտէրը կրաւորական դեր է կատարում իր պաշտօնի մէջ, իսկ նրա գործերը, որոնք բազմաթիւ են, կատարում է շինական գրագիրը։ Ճիշդ այդ դրութեան մէջ են գտնվում այժմս մեր Ախալքալաքի գաւառի շինական հասարակութիւնները, ուստի դորա համար, ինչպէս շատ անգամներ, նոյնպէս և այժմս կրկնում ենք որ շինական գրագիրը պէտք է լինի ընտրված հասկացող անձն, որից կարելի լինի պահանջել գործերի խելութեամբ կատարելը։ Բայց մենք միշտ դորա հակառակը տեսնում ենք, որովհետև այնպիսիքը լինում են գրագիր, որոնք ոչ միայն ռուսերէնից և ուրիշ շատ բաներից հասկացողութիւն չունեն, այլ հայերէնից անգամ երկու բառ անսխալ չեն կարող գրել, ուրեմն ինչ պէտք է լինի խեղճ գիւղացու դրութիւնը, որը միշտ գործ ունի դատարանում. շատ պարզ է որ, այդպիսի տգէտ տանուտէրից և գրագրից ոչ մի դրական պատասխան չը ստանալով իր յայտնած բողոքի մասին, խեղճ գիւղացին հարկադրված է դիմել տեղական գաւառապետին, նրա օրինաւոր կարգադրութեանը, պատմելով նրան իր վշտերը։ Վերջապէս ստանում է գաւառապետից մի հրամանագիր տանուտէրի վրա, որով հրամայում է տալ գանգատաւորին բաւականութիւն։ Պէտք է երևակայել, թէ ինչ բաւականութիւն կարող է տալ տանուտէրը գիւղացու խնդրին, երբ խղճալին չէ հասկանում իր ունեցած իրաւունքները և պարտականութիւնները, չէ հասկանում նմանապէս նրա վարձած տգէտ գրագիրը։ Գիւղացին մնում է մոլորված. ո՞ւր գնայ, ինչ անէ, ո՞րտեղից իր ցաւերին դարման գտնէ. ողորմելին իր դրութիւնից չը գտնելով ոչ մի ելք, բեզարած թողնում է գործը անհետևանք և յուսահատված վերադառնում է իր տունը։ Գիւղացին, յետանալով իր գործից և զրկվելով մի քանի մանէթներից, այն ժամանակը հաղիւ հազ հասկանում է իր արած սխալմունքը և զղջում է, որ ընտրել է այդպիսի անարժան տանուտէր և շինական գրագիր, թէև, ինչպէս ասեցինք, այդ բոլոր կրած նեղութիւնների դառնութիւնը վայելում է իր անխոհեմ կերպով ընտրելուց։ Մենք կարծումենք, որ տեղական վարչութիւնը պէտք է պահանջէր, որ տանուտէրը ունենար հասկացող գրագիր և այն ժամանակ շատ անկարգութիւնների վերջ կը տրվէր։ Հասկացող գրագիրը հասարակութեանը շատ օգուտ է տալիս, որին ես ականատես եմ եղած. այդպիսի գրագիրը աղդեցութիւն ունենալով շինական դատաւորների վրա, չէ թոյլ տալիս որ վերջինները ապօրինի վճիռ կայացնեն, կաշառքներ առնեն, սրան կամ նրան խաբեն և այլն։ Մէկ ուրիշը տեսնելով տանուտէրի անիրաւացի գործունէութիւնները, աշխատել է հեռացնել տալու այդպիսի վնասակար անձը և բանը գլուխ է բերել։ Իսկ այժմեան գրագիրները արթել են կամ կարող են անել. ոչ երբէք, որովհետև իրանց խելքից և ուժից շատ վեր բան է։ Միանգամայն մեզ համար շատ անհասկանալի է եղել, թէ ինչու համար այս տարիներս սկսեցին աճել այդպիսի անպիտան տիրացու գրագիրները հասարակութիւնների մէջ (բացի մի երկուսից)։ գուցէ դայ ժամանակ, որ կարողանանք պարզել այդ հանելուկը։ Շինական գրագիրները մինչև հիմա ստանում էին տարեկան վարձ 4—500 ռուբլ, բայց այժմ առաջ գալով այդպիսի անդրադէտ և տգէտ գրագիրներ, գրագրական վարձը եղաւ 100—150 ռուբլ։ Հասկանալի է, ի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Թիւրքաց Հայաստանում լինելիք արհեստանոցների վերաբերեալ հարցը որչափ բարձր է և որչափ էլ ունենայ իր բազմակողմանի և օրինակելի կէտերը, սակայն որպէս մի հայ հասարակ մարդ՝ նոցա կարևորութեանց մասին վստահ եմք յայտնելու և մեր նկատողութիւններ։

Տաճկա-Հայաստանի հայոց կենտրոնացած ուժը մենք գտնում ենք Կ. Պոլսում։ Երևելի օրեայ ճանապարհ հեռաւորութեամբ այդ եւրոպացած մայրաքաղաքի մէջ, երկար տարիների ընթացքում կազմվելով կերպ-կերպ ընկերութիւններ, ոչ մինը չը մտածեց հետամուտ լինելու Թիւրքաց Հայաստանի անտեսական դրութեան, ոչ մինը չը դուրս եկաւ իր փափուկ անկողնից անցնելու այդ պանծալի դպատի զանազան արդիւնաբերութեանց, բեղմնաւորութեանց և թէ բուսականութեանց ճիւղերը հնազօտելու։ Նոքա միշտ քարոզեցին ազգ, կրօն, հայ, հայրենիք, լոյս, խաւար, ուսում, գիտութիւն և շատ ուրիշ բաներ։ Կարելի է ասել որ և ոմանք ցնորական երևակայութեան տակ դիմակաւորված՝ ընդարձակ քաղաքի այս ու այն արուարձանների կամ անկիւնների մէջ լոկ խօսքերով էին օր անցկացնում։

Իրաւ է՝ մարդասիրական զգացմունքը պարտաւորեցնում էր թէև պօլսեցի պարոնէից՝ կարեկցելու իրանց առաջնից անցնող ծանր հակով բեռնաւորված համալին, բայց նրանք բաւականանում էին նրանով, որ տալիս էին նրան մի կամ երկու սպիտակ մէջիտ. բայց չէին մտածում սոյն ամենակարևորագոյն հարցի մասին թէ ինչ ստիպումն է հարկադրել այդչափ վիթխարի թշուառներին, որ նոքա ակամայից այդ վիթխարի ճակը իրանց վրա կրելուց չեն սարսափում։ Չէին մտածում այդ դառն տարաբրութեանց վախճան տալու մի ելք, մի հնար՝ դարաւոր գաղթականութեան առաջքն առնելու։ Բացառութեամբ եմ խօսում. եթէ գտնվել են մտածողներ, գուցէ նոցա ձայնը նոյնպէս չէ ունեցել ներդործիչ զօրութիւն։—Կամենալով խօսել ունենալիք արհեստանոցների օգտակարութեան տեսակէտից, կամ նոցանից առաջ եկած օգտակարութեանց մասին, գործի տեսական երևոյթից վերառած, ես յառաջ եմ բերում այստեղ իմ տեսած զանազան արհեստանոցներում պարապող բանւոր դասի դէպի միմեանց ունենալիք վերաբերութիւն։

1871—72 թուականներում ինձ յաջողվեց տեսնել Ասիական-Տաճկաստանի դլխաւոր քաղաքների արհեստանոցներում խառն ազգաբնակութեամբ պարապող մարդկանց բազմութիւն. որպէս միամօր և միահօր որդիք այդ բանւոր դասը անկեղծ հաւատարմութիւն ունի դէպ իր բանւոր ընկեր։ Տիգրանակերտում, Բերայում, Հալէպ, Դամասկոսում և Միջերկրական ծովի հարաւա-եղերքի մի քանի դլխաւոր քաղաքներում—Դրապլուղում Լաթէքիայում և այլն, ուր բազմաթիւ են մետաքսեայ գործուած տարազների արհեստանոցներ և այլ գործարաններ—քարխանաներ, մահմետական բանւորը կամ արհեստաւորը այն համակրութիւնն է ցոյց տալիս դէպ ոչ մահմետական, որից մարդը սպասել կարող է և անձնանուիրութիւն։

Թիւրքիայում՝ ընդհանրապէս խօսելով, արհեստաւոր մարդը ամենուրեք յարգելի է համարվում և իսկ թիւրք արհեստագէտը իրայնում մի առաւելութիւն է զգում, որ այդու նա՝ իր ձեռքի արդար դաղումն է վայելում, որ և այդ համեմատութեամբ նա վերաբերում է դէպ ոչ մահմետական արհեստաւորը։

Արհեստանոցների բարոյապէս ճնշումները ես ունեմ իրանց կողմնակի արդիւնաւորութիւնն։ Դիցուք թէ Տաճկա-Հայաստանի մի ո և իցէ կենտրոնատեղում չլինէին դաւօներ, գործարաններ, նրանք պատկանէին հայ կամ այլակրօն ընկերութիւնների, բանւորները ընդունվէին անխտրաբար։ Դուք ինչ էք կարծում, այդտեղ հայութիւնը պիտի չունենար իր որոշակի ազդեցութիւն. մինչև իսկ գործածական լեզուն և տիրապետողը պիտի լինէր հայ լեզուն, այլասեռ կամ այլակրօն բանւորը ստիպեալ պիտի համակրէր իր գործակից հային։ Այսպէս եմ տեսել ես այն արհեստանոցներում պարապող բանւոր դասի վարվողութիւն դէպ միմեանս։

Եթէ Տաճկա-Հայաստանի վրա նիւթապէս և բարոյապէս ներդործութիւն ունենալու նպատակ ունին մեր հայ գործիչներ և ինտելիդենցիան, եթէ այդ հին աշխարհի տնտեսական դրութիւնը արդիւնաւորեցնելու միջոցներ կամենում են ձեռք առնուլ, եթէ գայլն ու գառը ի միասին ճարակեցնելու գիտաւորութեան պէտք կայ, նպատակին հասնելու անհրաժեշտ պայմաններից մինն է ունենալ արհեստանոցներ Տաճկա-Հայաստանի մի քանի կենտրոնացած քաղաքներում, նայելով երկրի բերրութեան և ինչ ինչ արտադրիչ արդասիքներին։ Տգէտ ամբոխի վարք ու բարքը ուղղելու համար այնչափ չէ զօրեր մտաւոր և բարոյական ուժը, որքան կը զօրէ արհեստականը, որը մի կողմանէ ևս օգտելով նորա կոպտութեան, բարոյապէս կօգտէ նրա մտաւոր կեանքին, այնպէս որ բոլորովին չը մշակված գեհենիկը չուտով ընտելացնել կարելի է ենթարկեալ արհեստին։

Առանց խոտորելոյ մեր նպատակի բուն ուղղութիւնից, ես մի գլխաւոր պատճառ եմ բերում այստեղ, Տաճկա-Հայաստանում անգործ մնացող և դատարկաշրջիկ մարդկանցից գոյացած անկարգութեանց և աւազակութեանց։ Ստոյգ է որ Տաճկա-Հայաստանում վաճառականութեան, արհեստի, երկրագործութեան և այն հարկաւորելիք պարապմունքների՝ մեծամասնութեամբ տիրապետում է ոչ մահմետական տարրը։ Կարինում, Վանում, Բաղէշում, Տիգրանակերտում, Խարբերդում և Փոքր Հայոց երևելի քաղաքներում առևտրական և արուեստից հրապարակներում գործողների մեծամասնութիւնը հայ ամբոխն է, ուրեմն Թիւրք, քուրդ, չերքէզ ազգաբնակութիւնը անընդունակ լինելով արդար պարապմունքների, միշտ ակնապիշ է լինում տիրող կառավարութեան ծառայութեան մէջ դեր խաղալու։ Ենթադրենք որ այսօր մի թիւրք անհատը՝ ոստիկանութեան դուռը ծառայելով, ստանում է ոչ այնչափ ռոճիկ, որչափ նա անազնիւ միջոցներով ձեռք կարողանում է բերել ևս այնչափ աւելի. պաշտօնից զրկվեց նա, անցաւ այն դատարկաշրջիկների կարգը. չունի արհեստ, չունի մանկութիւնից ստացած մի հիմնաւոր ուսում կամ արհեստ կամ այլ պարապմունք, ինչ պիտի անէ, ինչ պիտի գործէ այդ պաշտօնազուրկը։ Բոլոր երևոյթները նրա համար տխուր են, իր անցեալ վատութիւնները երեսին են տալիս, նա ընդունակ է միայն հարկահանութեան պատրուակով գիւղեր գնալ և շան-

հարկէ, որ քիչ շատ հասկացող և գործերի հետ ծանօթ մարդը այդպիսի ինչին վարձով չի համաձայնվի ծառայելու, մնում է ասպարէզը տըգէտներին, որոնք զօր են տալիս իրանց դըլուխներին և ինչ եղծմունքներ ասես, որ չեն գործում: Իմ կարծիքով, տեղական վարչութեան ուշադրութիւնը անհրաժեշտ կարևոր է այս հարցի վրա, որ այդպիսիների ձեռքից ազատէ գիւղացուն: Գիւղացին անհասկացողութեամբ ցանկանում է էժան գնով գրագիր վարձել և աւելի ձեռնտու և օգտակար է համարում այդպիսիք ունենալը, որոնց երեսից, ինչպէս վերև յիշեցինք, շատ վընասների և փորձանքների է հանդիպում, քան հասկացող և գործունեայ գրագիրը, որից մեծ օգուտներ կարող է ունենալ ամեն մի գործում: Մեր գիւղացին տգիտութեան երեսից բարոյականապէս հարստահարվում է և ճնշվում է զանազան մարդկանց հարստահարութիւններից և կամայականութիւններից. նա երբէք կեանքումը իրան ազատ չէ տեսած ստրուկ և ճորտ դառնալուց զանազան վաչխառուների և պարտատէրերի ձեռքում. առանց լուսաւորութեան նա չի սթափվի այդ մահաբեր քնից, չի հասկանայ իր օգուտը և վնասը, և չի ազատի ինչպէս իրան, նոյնպէս իր ապագայ սերունդը խաւար տգիտութիւնից:

Թող ներվի ինձ այստեղ Ախալքալաքի ուսումնարանների մասին ես մի քանի խօսք ասել: Ախալքալաքի ուսումնարանները շատ վատ, անհամեմատելի և անհոգ դրութեան մէջ են գտնվում. ուսուցիչներից մի քանիսը, սակաւ բացառութեամբ, պարապած են ինտրիգաներով, բացի այդ (ուսուցիչներից) դրանցից մէկն էլ պարապում է և հարբեցողութեամբ: Վերջինիս վարմունքը աւելի կեղտոտ և աւելի զզվելի է: Թէև վաղուց է նկատում ենք, որ այդ պարոնը շատ անգամ հարբած և գինետներում վայր է ընկած լինում, լռում էինք այն յոյսով, թէ գուցէ պարոնը իր անբարոյական վարմունքից յետ մնայ և զգայ, որ ուսուցչին անվայել է հարբեցողութեամբ պարապելը: Բայց երբ տեսնում ենք, որ նա չարունակում է մի և նոյն գործողութիւնը, առանց պատկառանքի, համարեա իւրաքանչիւր օր, ստիպվեցայ այս երկտողով նախկին թեմական տեսուչ պ. Բարխուդարեանցի ուշադրութիւնը դարձնել դրա վրա: Ուսուցիչը աշակերտի համար հայելի է. ուսուցչից պահանջվում է այդ կոչման արժանանալու համար բարոյականութեան տէր անձն լինել. եթէ ուսուցիչը պարապում է հարբեցողութեամբ, ի հարկէ, աշակերտը չէ կարող սովորել որ և իցէ ուսում կամ բարոյականութիւն: Մեծայոյս ենք, որ եթէ նոր տեսուչը բարեհաճի գնալու Ախալքալաք հարցաքննութիւնների ժամանակ, քննելով բոլոր խճճված մեր ուսումնարանների մէջ եղած գործերը, ուսումնարանների յառաջադիմութեան համար վնասակար անձը կը հեռացնէ իր պաշտօնից, իսկ խղճմտանքով իր պարտականութիւնը ճշդութեամբ կատարող ուսուցչի արժանաւորութիւնը պէտք է որ գնահատէ:

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Շուշի, 30 յուլիսի

Թէպէտ և Օրբէլեանների տոհմին թողած ժառանգութիւնը հնդկական միլիոնների մասին լրագրական պօլեմիկա բանալ անօգուտ է, բայց որովհետև ամեն մի ազնիւ մարդու պարտականութիւնն է պաշտպանել ճշմարտութիւնը—ուստի, խոնարհաբար խնդրում եմ բարեհաճեցէք տեղի տալ ձեր պատուական լրագրի մի անկիւնում հետևեալին:

«Մշակ»-ի մէջ ապած իմ նամակը առիթ տուաւ մի քանի տեղերից ես ձայն հանել Օրբէլեանների մասին, իսկ № 95-ի մէջ տիտուլեարնի սովետնիկ Յակոբ Օրբէլեանցին (իսկական Զաղալեանցին) պատասխանել այդ նամակին:

Ահա այս իսկ վերջինիս վերաբերմամբ ես թոյլ եմ տալիս ինձ երկու խօսք ասել: Ես այնքան չէի ցաւի եթէ 70 միլիոնները ամբողջութեամբ հասնէին պ. տիտուլեարնի սովետնիկին, կամ մի այլ ուրիշի, քանի որ աշխարհի մէջ ամեն բան կարելի է դարձած, բայց ինձ համար զարմանալին այն է, թէ ինչպէս մարդ յանդգնում է լոյսի պէս պարզ ճշմարտութեան դէմ խօսել, լրջօրէն և համեստութեամբ ասած խօսքերին և փաստերին պատասխանել անվայել ձևով: Ես կարծում եմ, որ ազնիւ մարդու սեպուհ պարտականութիւնն է ամեն բանի մէջ ճշմարտասէր լինել. ես կարծում եմ, որ մի անորոշ և անյայտ ժառանգութեան հրապուրանքը չէ կարող մարդուն հարկադրել անվայել բաներ գործել և այդ մասին դեռ վերկենալ լրագրութեան մէջ, հասարակական մտքի առջև խօսել, բերելով մի քանի պաշտօնական թուանշաններ: Պ. Օրբէլեանց չափազանց մեծ նշանակութիւն է տալիս մի քննիչ Արդէմեանցի թուանշաններին, չափազանց մեծ հաւատք ունի նրանց վրա. երևի նա չէ իմանում որ պաշտօնական մարդիկ առանց մեղքի չեն, և որ Արդէմեանցի քննութեան մէջ կարող է սխալութիւն, կողմնապահութիւն լինել: Թող սփոփվի պ. Յակոբ Օրբէլեանը Արդէմեանցի քննութեամբ տուած յայտերով, բայց խօսել նրանց մասին ամենքի առաջ, համարել նրան ամենահաստատուն աղբիւր, դա միայն իր վնասին կը ծառայէ, որովհետև այդ քննութիւնը այնպիսի խորհրդաւոր հանգամանքների մէջ է կատարվել, այնպիսի ձևով է սկսվել և վերջացել, որ շատ հեշտ է միանգամից ոչնչացնել նրան, եթէ միայն մինչև այժմ նա գոյութիւն ունի: Բաւական է միայն պ. Օրբէլեանցին նեղութիւն կրել տեսնել Զանկեզուրի գաւառական վարչատան մէջ 1868 թուի գործը № 115, որի մէջ տպված է Զանկեզուրի գաւառի հինգ գիւղերի ամբողջ հասարակութեանց խնդիրքը, որով ջրում են նրա և նրա բարեկամների Օրբէլեան կոչվելը, յայտնելով որ քննիչ Արդէմեանցը իրանցից ոչինչ չէ հարցրել, այլ հիմնվել է մի քանի կուսակից անհատների վկայութիւնների վրա. այս պատճառով էլ Զանկեզուրի գաւառապետը 21 դեկտեմբերի 1868 ամի № 1540 հաղորդել է Ղարաբաղի կոնսիստորիային և Էջմիածնի սինոդին չը տալ այդ պարոններին վկայական Օրբէլեանց տոհմին պատկանելու մասին, և ստացել է այդ երկու տեղերից էլ հաղորդակցութիւն 30 յունվարի և 10 յունիսի №№ 62 և 1084, որ այդ խնդիրքը կը կատարվի և այդպիսի վկայական չէ տուած նրանց, որ այս բոլոր թղթերը այժմ էլ ապահովութեամբ և խաղաղութեամբ մնում են գործերի մէջ: Նոյն իսկ պարոնի յիշած քաղաքական դէպուտատ Էլչի-Բէկովն է եղել խնդիրք ներկայացնող հասարակութիւնների պարագլուխը, և իր ստորագրութեամբ հաստատում է, որ Արդէմեանցի քննութիւնը ապօրէն է, անվաւեր է և պարոնը միայն իւրացրել է Օրբէլեան ազգանունը. այս թուղթն էլ գտնվում է կոնսիստորիայի մէջ: Մթթէ պարոն Յակոբ Օրբէլեանց, ինչպէս կոնսիստորիայում 30—40 տարի ծառայող մարդ, չէր իմանում այս մասին. այո, իմանում էր, բայց լաւ գիտէր, որ ժամանակն ու լռութիւնը կարող են աւելի մեծ բաներ տեսնել, քան զանազան պաշտօնական թղթեր, կարծում էր թէ այդ բանը միայն իրան կը լինի յայտնի: Ի՞նչի է այդպէս կարծում. Ղափանում կան 100 տարեկան մարդիկ, որոնք շատ լաւ են ճանաչում նրա ծագումն ու ինչ լինելը, և հարկաւորած ժամանակ խօսել կը գիտենան: Ինչ իրաւունքի և հիման վրա են տուել պարոնին վկայական զանազան անձինք, արդեօք երկինքն է նրանց յայտնել Օրբէլեանի մասին, թէ եղել են մի քանի ուրիշ չօշափելի փաստեր, դա մնում է գաղտնիք, որը կարելի է հեշտ լուծել իր ժամանակին: Պ. Յակոբ Օրբէլեանցի և իր ազգակիցների բաղձանքն է մասնակից լինել Հալիձոր բերդի տիրապետութեան մէջ, և ցոյց է տալիս իմ սխալ հասկացողութիւնները պատմութեան մասին. եթէ ես չեմ կարողացել հասկանալ Զամչեանի լեզուն, ուրեմն ինքն պ. Օրբէլեանցը չէ հասկացել գոնէ պ. Բաֆֆիի «Դաւիթ-Բէկ» գեղեցիկ և հայելու նման պարզ պատմութիւնը. այլապէս նա տեղեակ կը լիներ, որ Հալիձորը Մխիթար սպարապետից բազմաթիւ տարիներ առաջ եղել է Մելիք-Փարսադանեանցների տոհմային ժառանգութիւն, և եթէ Մխիթար սպարապետը ժամանակաւորապէս կառավարել է բերդը, դա դեռ փաստ չէ: Խորհուրդ կը տայի պարոնին շուտով սկսել իր գործը մեր դէմ Հալիձորը յետ առնելու համար: Ես էլ կը խնդրեմ Աստուծուց, որ շուտով այդ գործը քննվի, գոնէ այն ժամանակ պարոնը լաւ կը հասկանվի, որ կեղծ փաստերը ոչ ոք չէ յարգում:— Իսկ ինչ վերաբերվում է ամենապիտուն պարոնի «անմեղ պատանի» և այլ խօսքերին, դրա համար էլ ես մի օր կը պահանջեմ նրանից բաւականութիւն ում ձեռքով հարկաւոր է: Հիմա թող բարեմիտ ընթերցողը ինքը դատէ, մեղանից ո՞րն է պարոնի ասած գիւղական տանուտէրը, որ երդով և հրաչքով է եղել հաստատելու իր անսխալականութիւնը: Թող պ. Յակոբ Օրբէլեանցը համոզված մնայ, որ ճշմարտութիւնը երբէք չի ծածկվի այն փոշիի տակ, որ արհեստական ձևով ստեղծում են ճարպիկ ընաւորութիւնները: Թէպէտ և ես բաւականին կարողութիւն ունեմ մի մի հերքել պ. Օրբէլեանի խօսքերը, բայց չեմ ուզում ընթերցողի գլուխը ցաւեցնել: Այստեղ յիշած փաստերով նա կարող է որոշ հասկացողութիւն կազմել, թէ ինչ տեսակի է պատկանում Յակոբ Օրբէլեանի ամբողջ գրվածքը, ինչ վերաբերում է «Մշակ»-ի № 92 Դերբենդից հաղորդած լուրին, ես խորհուրդ կը տամ պ. լրատուին նախ ծանօթանալ գործի էութեան և իր յիշած պարոնների ազգականութեան հետ և յետոյ հաղորդել նրանց մասին լուր. լրագրութիւնը ֆանտազիայի հնարած լուրերի հանդէս չէ: Թող միայն հասկանայ պ. լրատուն, որ յիշած պարոնները այստեղի մահտեսի Յովհաննէս և Յակոբ Օրբէլեանցների մօտիկ ազգականներն են և կարմրի:

Կարապետ - Բէկ Մելիք - Փարսադանեանց - Օրբէլեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒԻԵՐ

—

ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱՅԻՑ մեզ գրում են: «Այս տարի ժողովրդի մեծ մասը հացի կողմից ապահով է և հարկաւորութիւն չունի հաց գնելու: Հազվագիւտ է այնպիսի մարդ որ կարօտութիւն կունենայ դիմելու ուրիշ գաւառներին, որոնք զուրկ են ցորենից: Դրանք, յոյս կայ, իրանց քաղցը կը կարողանան յագեցնել Ղարաքլիսայում:»

—

Թեր արձակել գիւղական ողորմելի հասարակութեան վրա, հաւ խորվել ալ, ձուաձեղով իր քաղցած փորը կարդի բերել. էլ ուրիշ ոչինչ ապրուստ չէ մնում նրան, և ահա անցաւ գիշերաշրջիկների կարգին, աւազակութեան—որտեղ նըմանվելով նոցա, առօրեայ ապրուստի միջոց է գտնում: Այսպէս եղաւ երբեմն Վանում. չեմ յիշում թէ որ թուականներումն էր, երբ ոստիկանութիւնը թեթեացրեց ծառայողների թիւը, Վանի Այգեստան կոչված բաժնում տեղի տուած ոճրագործութեանց մէջ գործողները այդ պաշտօնազուրկ ժանդարմէ ոստիկաններ էին:

Թիւրք արհեստաւորից կամ վաճառականից վատ ակնարկութիւններ չէ եղել.—բացառութիւն միայն երբեմնակի պատահարաց—իւր պատիւ և յարգ ճանաչող վանցի խալամը իղձ է յայտնում հայ արհեստաւորին, եթէ վերջինս իւր մօտ աշակերտ ընդունի նորա որդուն: Նոյնն է և մինչև այժմ. բաղնիչեցի, կարնեցի, խարբերդցի վաճառական կամ արհեստաւոր թիւրքերը վատ հակակրութիւն չեն ունեցել դէպ իրանց հարևան քրիստոնեայն, այլ հակառակ դէպքում նոքա կարելի եղածին չափ պաշտպանել են զրկեալին: Իմ արած ճանապարհորդութեան ընկերակցել էին տիգրանակերտցի, սղերտցի, մուսուլցի, նինուեցի թիւրք և մի քանի քուրդ վաճառականներ: Կարաւանը անցնում էր երկիւղալի անցքերից և կիրճերից, իջևանած տեղերը վերաբերեալ ծառայութիւնները կատարում էին թիւրքեր. մենք՝ հայերս թեք ընկած հանգիստ էինք առնում, նոքա պատրաստում էին ճաշ, այն վերաբերութեամբ որպէս վարձկան ծառաներ: Բայց ինչումն էր այս տեսակ վարվողութիւնը կայանում, եթէ ոչ համեստ պարապմունքների մէջ. հայ մարդի, վաճառականի ազդեցութիւն էր այս բանում, որովհետև հայի խորհրդով պիտի կատարվէր նոցա վերաբերեալ առևտուր:

Ինչ է պատճառ որ Մոկք և Շատախ գաւառացի քուրդը մեծ պատով է ընդունում իւր մօտ հայ արհեստաւորին. որովհետև կարևորութիւնը հարկադրում է զէթ իւր օգտին՝ հարկ եղած պաշտպանութիւն անել: Գարնանամտից այդ գաւառների հայ շալագործները, մէն մինակ կամ մի քուրդի ընկերակցութեամբ, անցնում են բարբարոսների մէջից. գիւղից գիւղ շրջագայելով ծախում են արդէն պատրաստած շալն ու շալվար և նորից հաւաքում են բուրդ և ֆիլիկ ապագայ գործուածների համար: Այստեղ հարկ անհրաժեշտ է խօսել այդ երկու գաւառի լեռնական հայ մարդկանց և կանանց ձեռարուեստների մասին:

Այդ հայուհիները ֆիլիկ և բուրդը ներկում են նախ՝ զանազան գոյնի, մանում են մաղաչափ նուրբ թելեր, և այդ թելերից ահա պատրաստվում է այն ընդհանրացած շալ աբան: Երեսուն տարիէ վեր կը լինի, որ նա ընդունվել է ոչ թէ միայն Ասիական Տաճկաստանում, Պարսկաստանում, այլ և Կ. Պոլիս, Եգիպտոս և Եւրոպացոցմէ շատերը ծանօթացել են այդ դիմացկուն և մի և նոյն ժամանակ գրաւիչ հագուստին:

Այդ բոլորը կատարվում է ահա այն անկիրթ, գռեհիկ կարծված գաւառացի հայ արհեստաւորի ուղեղից դուրս բերված նահապետական կոշտ կոպիտ ոստայնով և մի քանի փայտեայ գործիքներով: Նոյն ձեռարուեստներ ունեն և կորճէ,ք նահանգում բնակվող քրդախօս հայ ղըհեցիները, որոնցից շատերը այժմ գաղթելով Վան, այդ արհեստով հայթայթում են իրանց հաց: Զը մոռանանք յիշելու որ ֆիլիկից պատրաստված նուրբ թելերը մինչև անգամ հակերով ուղարկվում են Պարսկաստան, Դաւրիժում գործածում են տեղական աբաների մէջ:

Եթէ կատարելագործվէր բրդագործութեան վերաբերեալ արհեստը, մթթէ պակաս արժողութիւն պիտի ունենար նոցա հիւսած և գործած զանազան և գոյնզգոյն տարազները, որոնք այնչափ դիւրամատչելի են դառել ոչ միայն Վասպուրականի բնակչաց, այլ և Թիւրքիայում ազնուական և իսկ պետական անձանց համար:

Ուսումը, դիտութիւնը լոկ գրականութեան և վարժ ընթերցանութեան մէջ միայն չէ պարունակվում. ժողովրդին և շրջարկակ գռեհիկ ամբոխին համակրելի լինելը կարելի է և հարկաւորելիք արհեստներով, որ նոյնպէս կարող ենք ընդունել ինչպէս գիտութիւն: Լոկ Հայկայ, Արամայ, Վարդանայ և Վահանայ անուններ կրկնելով և բոպէական ոգևորութիւն պատճառելով կամ յուսադրելով ամբոխը, մեր ոխերիմ թշնամեաց զայրոյթ կը սաստկացնենք դէպ մեզ՝ թշնամիներին նախազգուշութեան տեղիք կը տանք: Հաւատի լինենք, որ գաւառացի հայն աւելի ընդունակ կը լինի իւր շուրջ գտնված թէ բուսականութեան, թէ կենդանաբանութեան և թէ այլ ինչ արտադրութեանց, եթէ նորա նիւթական կամ տնտեսական վիճակ ապահովված լինեն որոշ պայմաններով: Նա չէ մտածում նորից վաճառական դառնալ, կամ փողեր գիրել, այլ բաւական է որ կուշտ փոր լինին իւր երեխայք, մերկ և բոկոտն չը դուրս գայ նրա կին, և ինքը չենթարկվի վաչխառուի ծանր լծին: Երբ այս բոլորից ապահով գտնվեցաւ, դու պահանջիր նրանից քո պատուէրի համաձայն գործունէութիւն, նրանում դու կը տեսնես ամենաանկեղծ հաւատարմութիւն և ժրաջան ծառայ, որովհետև այդ քննութիւնը այնպիսի խորհրդաւոր հանգամանքների մէջ է կատարվել, այնպիսի ձևով է սկսվել և վերջացել, որ շատ հեշտ է միանգամից ոչնչացնել նրան, եթէ միայն մինչև այժմ նա գոյութիւն ունի: Բաւական է միայն պ. Օրբէլեանցին նեղութիւն կրել տեսնել Զանկեզուրի գաւառական վարչատան մէջ 1868 թուի գործը № 115, որի մէջ տպված է Զանկեզուրի գաւառի հինգ գիւղերի ամբողջ հասարակութեանց խնդիրքը, որով ջրում են նրա և նրա բարեկամների Օրբէլեան կոչվելը, յայտնելով որ քննիչ Արդէմեանցը իրանցից ոչինչ չէ հարցրել, այլ հիմնվել է մի քանի կուսակից անհատների վկայութիւնների վրա. այս պատճառով էլ Զանկեզուրի գաւառապետը 21 դեկտեմբերի 1868 ամի № 1540 հաղորդել է Ղարաբաղի կոնսիստորիային և Էջմիածնի սինոդին չը տալ այդ պարոններին վկայական Օրբէլեանց տոհմին պատկանելու մասին, և ստացել է այդ երկու տեղերից էլ հաղորդակցութիւն 30 յունվարի և 10 յունիսի №№ 62 և 1084, որ այդ խնդիրքը կը կատարվի և այդպիսի վկայական չէ տուած նրանց, որ այս բոլոր թղթերը այժմ էլ ապահովութեամբ և խաղաղութեամբ մնում են գործերի մէջ: Նոյն իսկ պարոնի յիշած քաղաքական դէպուտատ Էլչի-Բէկովն է եղել խնդիրք ներկայացնող հասարակութիւնների պարագլուխը, և իր ստորագրութեամբ հաստատում է, որ Արդէմեանցի քննութիւնը ապօրէն է, անվաւեր է և պարոնը միայն իւրացրել է Օրբէլեան ազգանունը. այս թուղթն էլ գտնվում է կոնսիստորիայի մէջ: Մթթէ պարոն Յակոբ Օրբէլեանց, ինչպէս կոնսիստորիայում 30—40 տարի ծառայող մարդ, չէր իմանում այս մասին. այո, իմանում էր, բայց լաւ գիտէր, որ ժամանակն ու լռութիւնը կարող են աւելի մեծ բաներ տեսնել, քան զանազան պաշտօնական թղթեր, կարծում էր թէ այդ բանը միայն իրան կը լինի յայտնի: Ի՞նչի է այդպէս կարծում. Ղափանում կան 100 տարեկան մարդիկ, որոնք շատ լաւ են ճանաչում նրա ծագումն ու ինչ լինելը, և հարկաւորած ժամանակ խօսել կը գիտենան: Ինչ իրաւունքի և հիման վրա են տուել պարոնին վկայական զանազան անձինք, արդեօք երկինքն է նրանց յայտնել Օրբէլեանի մասին, թէ եղել են մի քանի ուրիշ չօշափելի փաստեր, դա մնում է գաղտնիք, որը կարելի է հեշտ լուծել իր ժամանակին: Պ. Յակոբ Օրբէլեանցի և իր ազգակիցների բաղձանքն է մասնակից լինել Հալիձոր բերդի տիրապետութեան մէջ, և ցոյց է տալիս իմ սխալ հասկացողութիւնները պատմութեան մասին. եթէ ես չեմ կարողացել հասկանալ Զամչեանի լեզուն, ուրեմն ինքն պ. Օրբէլեանցը չէ հասկացել գոնէ պ. Բաֆֆիի «Դաւիթ-Բէկ» գեղեցիկ և հայելու նման պարզ պատմութիւնը. այլապէս նա տեղեակ կը լիներ, որ Հալիձորը Մխիթար սպարապետից բազմաթիւ տարիներ առաջ եղել է Մելիք-Փարսադանեանցների տոհմային ժառանգութիւն, և եթէ Մխիթար սպարապետը ժամանակաւորապէս կառավարել է բերդը, դա դեռ փաստ չէ: Խորհուրդ կը տայի պարոնին շուտով սկսել իր գործը մեր դէմ Հալիձորը յետ առնելու համար: Ես էլ կը խնդրեմ Աստուծուց, որ շուտով այդ գործը քննվի, գոնէ այն ժամանակ պարոնը լաւ կը հասկանվի, որ կեղծ փաստերը ոչ ոք չէ յարգում:— Իսկ ինչ վերաբերվում է ամենապիտուն պարոնի «անմեղ պատանի» և այլ խօսքերին, դրա համար էլ ես մի օր կը պահանջեմ նրանից բաւականութիւն ում ձեռքով հարկաւոր է: Հիմա թող բարեմիտ ընթերցողը ինքը դատէ, մեղանից ո՞րն է պարոնի ասած գիւղական տանուտէրը, որ երդով և հրաչքով է եղել հաստատելու իր անսխալականութիւնը: Թող պ. Յակոբ Օրբէլեանցը համոզված մնայ, որ ճշմարտութիւնը երբէք չի ծածկվի այն փոշիի տակ, որ արհեստական ձևով ստեղծում են ճարպիկ ընաւորութիւնները: Թէպէտ և ես բաւականին կարողութիւն ունեմ մի մի հերքել պ. Օրբէլեանի խօսքերը, բայց չեմ ուզում ընթերցողի գլուխը ցաւեցնել: Այստեղ յիշած փաստերով նա կարող է որոշ հասկացողութիւն կազմել, թէ ինչ տեսակի է պատկանում Յակոբ Օրբէլեանի ամբողջ գրվածքը, ինչ վերաբերում է «Մշակ»-ի № 92 Դերբենդից հաղորդած լուրին, ես խորհուրդ կը տամ պ. լրատուին նախ ծանօթանալ գործի էութեան և իր յիշած պարոնների ազգականութեան հետ և յետոյ հաղորդել նրանց մասին լուր. լրագրութիւնը ֆանտազիայի հնարած լուրերի հանդէս չէ: Թող միայն հասկանայ պ. լրատուն, որ յիշած պարոնները այստեղի մահտեսի Յովհաննէս և Յակոբ Օրբէլեանցների մօտիկ ազգականներն են և կարմրի:

Կարապետ - Բէկ Մելիք - Փարսադանեանց - Օրբէլեանց

—

ռայութիւններ որ նա գործ է դնում ինքեան պարզ երես ցոյց տալու: Իսկ նրա օգուտն այն է որ դու հոգաս նրա ընտանեկան պակասութիւններ: Այս կերպ փորձերը, եթէ չեմ սխալվում, անում են շատ անգամ մասնաւոր արհեստանոցների և ագարակների տէրերը:

Արհեստանոցների կողմնակի օգտակարութիւնը աւելի նպաստում է մի հարստահարչին բարոյապէս ճնշելուն, որին արհեստաւորը շղթայում է վատութիւններ ի գործ դնելուց. 1867—68 թուականներում, երբ շերամապահութեան գործը սկսվեց Վանում, Հիզան գաւառի ձորամէջերում—որտեղ բնակվում է շեյխ Ջելալէդինի ընտանիքը—գտնվում էին թթենիի հաստարմատ և տերևալից ծառեր. շերամապահի ընկերութիւնը այդ բազմաթիւ ծառերի մասին պայմանեց Շեյխի հետ: Գարուն սկսվելուն պէս, երբ որդերը սկսել էին շարժիլ և կեր խնդրել, գրաւիչ տեսարանը Շեյխին իր ստորադրեալներով շերամապահին աշխատաւոր մշակ էր արել: Այդ պատճառով Վանից Հիզան գնացող 30-ից չափ գործող անձինք կերակրվում էին Շեյխի յատկացեալ թէք,էյում—հասարակաց հիւրանոց: Այն բանաւորը որ հայի երեսն անգամ տեսնելը սրբապղծութիւն կը համարէր, շատ անգամ այդ ծառայող դասի հետ պարապում էր գործին և սեղանակից էր դառնում. ի հարկէ աւելի մեղմ պիտի վարվէին նորա միւս ստորադրեալներ:

Այդ թուականներում, Վանայ հայ ազգաբնակութեան մեծամասնութիւնը հետաքրքրվեցաւ այդ բանով. առանց կանխօրէն հետազօտելու շերամապահութեան և թթենիներ հասցնելու պայմանների յատկացեալ դէպքեր, շտապեցին շուտով հարստանալ. ոմանք քանդեցին այգիների պտղատու և անպտուղ ծառեր և խաղողի որթեր. փո-

Այս շաբաթ, ինչպէս հաղորդում են «Русскій Курьеръ» լրագրին, Ս. Պետերբուրգ հասաւ Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձու պ. Եանովսկի: Նրա գալը կապում են Կովկասի զիւղական ուսումնարանների վերակազմութեան հարցի հետ, որպէս դրա մասին միջնորդում էր Պետերբուրգում Կովկասի գլխաւոր կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կորսակով:

—

Այս օրերս պրոֆէսոր Անդրէաս Արծրունի մի քանի փորվածքներ արաւ Մցխէթ զիւղի Սամթավրո ասված հին գերեզմանատան մէջ: Փորվածքներ կատարվեցան ծանօթների մեծ հասարակութեան ներկայութեամբ և պ. Բայէրն հնագէտի օգնութեամբ: Մեծ մասը իրեղէնների, որոնք յայտնվեցան փորված գերեզմաններում, յայտնի են արդէն գիտական աշխարհին, օրինակ պղնձեայ ասպարանջանները (բլազուկներ), օղեր և այլն, բայց երկու փոքրիկ իրեղէններ մեզ նորութիւն, նոր գիտ են երևում: Մենք դուցէ սխալվում ենք, բայց որքան մեզ յայտնի է Սամթավրո գերեզմաններից դեռ փորագրված թանգագին քարեր չեն յայտնվել: Պ. Արծրունու աշխատութեամբ փորված գերեզմաններից դուրս եկան երեք փոքրիկ քարեր, որոնցից երկուսը թանգագին տեսակի, (մինը Սպինել, իսկ միւսը Օնիկս) որոնց վրա նկատելի են դեղեցիկ և լաւ պահպանված փորագրութիւններ: Մէկի վրա եղջերու է փորագրված, միւսի վրա արարէսկաներ, իսկ երրորդի վրա երկու մարդիկ եգիպտական շորերին նման շորերով: Եթէ այդ գերեզմանոցի մէջից դուրս եկած փորագրված քարերը մինչև այժմ գտնված չէին, այս օրերս պ. Արծրունու արած գիւտը անչուշտ նշանակութիւն կունենայ գիտութեան համար:

—

Այսօր, հինգշաբթի, օգոստոսի 25-ին, Թիֆլիսի Արհեստաւորների ամարային կլուբում պ. Գ. Սարումեան, մասնակցութեամբ տիկին Տէր-Յովհաննիսեանի, օր. Արշալուսի. պ. պ. Աւալեանի, Պարոն-Սարգսեանի և ուրիշների կը ներկայացնէ «Գիշերվան ոաբրը խէր է» վոդ. հեղ. Սունդուկեանցի և «Վուր առաքվիս, պիտի պսակվիս» վոդ. աշխ. Ն. Փուղինեանցի: Նոյնպէս կը լինի Զաւէշտ և միջոցներում կածէ երաժշտական խումբը, իսկ ներկայացման վերջը կը լինի պարահանդէս: Տոմսակները վաղօրոք կարելի է ստանալ պ. Գ. Սարումեանից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Daily News» լրագիրը ընդարձակ յօդուած է նուիրել իշխան Բիսմարկի լրագրի մեղադրանքներին Ֆրանսիայի դէմ, որը վերջացնում է հետևեալ խօսքերով. Թէպէտ բարեկամական համաձայնութիւնը Ֆրանսիայի հետ մեր պետական գործիչների նպատակն է և երկրի ցանկութիւնը, բայց յարձակողական և պաշտպանողական դաշնակցութիւնը արևմտեան երկու պետութիւնների մէջ Միջին Եւրոպայի մեծ պետութիւնների դէմ չէ համապատասխանում Անգլիայի դիտաւորութիւններին: Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դաշնակցութիւնը, որի մասին մի քանիսը երազում են, Աւստրիայի, Գերմանիայի և Իտալիայի դաշնակցութեան դէմ աներևակայելի է: Մենք Գերմանիայից ոչ վախենալու և ոչ էլ անբաւական լինելու առիթ ունենք: Նրանք մեզ չեն ըսպառնում և անհանդստութիւն չեն պատճառում: Ճշմարիտ է, Սերբիայի և Ռումինիայի միացնելը աւստրօ-գերմանական դաշնակցութեանը Աւստրիային տիրապետող կը դարձնէր Դանուբի վրա և միջոց կը տար նորան իր ձեռքն առնել Թիւրքաց մի քանի նահանգներ, բայց այն ժամանակ Թիւրքիայի բաժանումն անհրաժեշտ կը լինի: Մեր հնդկական կալուածների ամրողջութեան մասին հոգացող մարդիկ պէտք է ցանկանան, որ Աւստրիան աւելի հեռու մնայ Կ. Պոլսից, քան թէ Ռուսաստանը: Դժբաղդաբար մենք պէտք է ասենք, որ Ֆրանսիան է այն եւրօպական պետութիւնը, որի վրա մենք զգուշութեամբ պէտք է հսկենք: Այդ չէ նշանակում, որ մենք առիթ ունենք նրանից գանգատաւոր լինելու, բայց նրա գաղթականական նոր քաղաքականութիւնը շատ բանով մեզ էր վերաբերվում: Զը յիշելով Մադագասկարի և արևմտեան Աֆրիկայի մէջ մի քանի ձեռնարկութիւնների մասին, պէտք է ի նկատի ունենալ, որ Տօնկինի կռիւը կարող է բացարձակ պատերազմի փոխվել Չինաստանի հետ: Այդ պատերազմը կը վնասէ եւրօպական առևտրին և առաջ կը բերի մի նոր արևելեան խնդիր, որ աւելի ընդարձակ և սարսափելի կը լինի, քան թէ այն արևելեան խնդիրը, որ մի քանի սերունդների քաղաքագէտների պարապմունքների առարկայ էր: Ֆրանսիայի համար դժուար է թողնել իր սկսած ձեռնարկութիւնը: Նրան սպառնում է երեք պետութիւնների դաշնակցութիւնը: Նրանից է կախված զինաթափ անել կամ ոչնչացնել այդ դաշնակցութիւնը, հետևելով խաղաղասէր քաղաքականութեանը:

—«Times» լրագիրը նոյնպէս քննադատում է Nordd Allg. Zeitg.» լրագրի յօդուածը: Մենք կարծում ենք, ասում է «Times», ոչ ոք չի հերքի այն իրողութիւնը, որ «Nordd. Allg. Zeitg.» լրագրի յօդուածը մի կոպիտ վիրաւորանք էր և, եթէ նա չը զայրացրեց Եւրոպայի հասարակական կարծիքը, դրա պատճառն այն է, որ ամենքն էլ ընտելացել են Գերմանիայի կոչտ լեզուին, երբ նա խօսում է Ֆրանսիայի մասին: Ֆրանսիական մամուլը շատ իրաւացի նկատում է, որ անհիմն է գերմանական լրագրի մեղադրանքը, իբր թէ Ֆրանսիական լրագիրները սովորել են յարձակվել Գերմանիայի վրա: Ընդհակառակը նրանց ընթերցողները չէին կարող չը խոստովանել նրանց չափաւորութիւնը: Բայց եթէ Գերմանիան մինչև անգամ յանդիմանութիւններ անելու առիթ ունենար, այնուամենայնիւ, դրանց համար յայտնի ձև կայ: Պաշտօնական լրագրի յօդուածի անքաղաքավարութիւնը չէ կարելի արդարացնել նրա մէջ յայտնված մեղադրանքների ճշմարտութեամբ: Ամենահասարակ քաղաքավարութիւնը պահանջում է, որ Գերմանիան իր ցանկութիւնները կամ գանգատները յայտնէր Ֆրանսիական կառավարութեանը որոշված ճանապարհով: Եթէ նրանք վատ ընդունելութիւն գտնէին, այն ժամանակ միայն կարելի էր դիմել հրապարակական յայտնութեանը, թէպէտ այդ էլ չէր համապատասխանի Գերմանիայի արժանաւորութեանը: Բայց անհիմն մեղադրանք յայտնել այն ձևով, որ վիրաւորական է Ֆրանսիական կառավարութեան համար, դա կը նշանակի վարվել հակառակ քաղաքավարութեան կանոններին: Դիպլոմատիան իւրաքանչիւր դէպքի համար այլ միջոցներ ունի, բացի կոպիտ սպառնալիքներից և բոլոր երկիների շահերը պահանջում են, որ միջազգային յարաբերութիւնները այդ միջոցներով կատարվեն: Ֆրանսիան միակ պետութիւնը չէ, որ գտնվում է այնպիսի պայմանների մէջ, որ իր հզօր դրացու յանդգնութեանը նոյնպէս պատասխաներ և պատժէր նրան, բայց եթէ Ֆրանսիական կառավարութիւնը չի բողոքի իրան հասցրած վիրաւորանքի դէմ, մենք կարող ենք համոզված լինել, որ այդ վիրաւորանքը նորից կը կրկնվի: Որքան էլ գերմանացիները Ֆրանսիայի դէմ լինեն, որքան էլ վերջինը նրանց անհանդստացնում լինի, բայց այնուամենայնիւ դրանց արժանաւորութեանը ընդդէմ կը լինի Ֆրանսիայի հետ անքաղաքավարի վարվելը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ԽԱՐԿՈՎ, 23 օգոստոսի: Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչ Աւագը իր որդի Պէտար Նիկոլայեվիչի հետ օգոստոսի 21-ին անցաւ Զուգուեվ, իսկ այսօր ուղևորվում է Բօմնա:

ՏՕՏՄԱ, 23 օգոստոսի: Վախճանվեցաւ Վոլոգդայի և Ուստիւժի արքեպիսկոպոս Ֆէօդոսի:

ԳՕՐԻՑԱ, 23 օգոստոսի: Երէկ կոմս Շամբորի մարմինը բազմաթիւ ժողովրդի ուղեկցութեամբ բերվեցաւ Կոստան-Վօվից, եկեղեցին սգի շքեղ զարդարանք ունէր: Ամպհովանի վրա դրված է սպիտակ դրօշակ ոսկեկար շուշաններով: Ֆրանսիայից և Իտալիայից բազմաթիւ օրինականներ են գալիս: Փարիզի կոմի հրաժարականի առիթով՝ մասնակցել յուղարկաւորութեանը, Գորիցայի մէջ հաւաքված ֆրանսիացիներ մտադիր են համակրական ցոյց գործել ի պատիւ կոմի:

ԼՕՆԴՕՆ, 23 օգոստոսի: Լուր է տարածված, որ զուլուսների թագաւոր Սետիվայո շուտով կը հասնի Պիտեր-Մօրիցբուրգ:

ԳԼԱՍԳՕ, 23 օգոստոսի: Այստեղ կալանաւորված են 9 իրլանդացիներ, որոնք մասնակցել էին դինամիտի փորձերին:

ՊԵՇՏ, 23 օգոստոսի: Երէկ երեկոյեան Սեգեդվօրի մէջ կատաղի ամբոխը շատ աւերումներ գործեց: Անկարգութեանը մասնակցողներից մէկը սպանված է, չորսը վիրաւորված: Սիկլօշիից զօրքեր են կանչված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 օգոստոսի: Սեպտեմբերի 1-ից ոչնչացնվում է ինժեներների զինանոցը: Արտասահմանի անցագիրների համար տուրքերի բարձրացնելը անյարմար է գտնված: Լիբավա-Բօմնի երկաթուղու ընկերութիւնը միջնորդում է Լիբավայի նաւահանգստի լայնացնելու մասին:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 23 օգոստոսի: Սեպտեմբերի 9-ին կօծեն այստեղի ռուսաց եկեղեցին. այդ հանդիսին գալու են ուղղափառ բարձր հոգևորականութեան ներկայացուցիչներից շատերը: Մեծ Իշխանուհի Մարիա Պավլօվնա այսօր առաւօտ ուղևորվելու է Կիլ:

ԳՕՐԻՑԱ, 23 օգոստոսի: Երէկ երեկոյեան կոմս Շամբորի մարմինը թաղվեցաւ ընտանեկան հանգստարանի մէջ, որ Կոստան-Վօվիցի եկեղեցու գլխաւոր բեմի տակն է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր., երկրորդ 94 ր. 25 կ., երրորդ 94 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 87 կ., հինգերորդ 94 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 214 ր., երկրորդ 210 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 12 կ., երկրորդ 92 ր. 12 կ., երրորդ 92 ր. 12 կ., ոսկի 8 ր. 33 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ $23^{13}/_{32}$ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 203 մարկ, Փարիզի վրա 251 ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

խանակ թթենիի սերմ ցանելու, որը չուտով կարդինաւորի, ձմեռվայ ցուրտ եղանակին Բուրսայէն, Պարսկաստանէն բերել տին թթենուոյ փոքր և միջակ ծառեր-ցռուկներ, որոնցից կէս մաս երկարատև ճանապարհներում ցրտատար եղաւ, կէս մասը հիւթից բոլորովին ցամքած կամ տնկած տեղ չը սիրելով կրակի բաժին դարձաւ. ամենափոքր մաս օգուտեց միայն: Եւ այդ ժամանակ երբ խոզակը երկրորդել էր իւր քունը և ոմանք երրորդումն էին, այդ որդերը տերևի տեղ կռծկռծում էին թթենիի ճախեր: Շերամապահը թափառում էր այդիից այդի թթենիի տերևներ ճարելու. անօթի որդերը կեր էին խնդրում, և ի հարկէ որ նա սոխպված մի միջակ թթենիի միայն տերևներ ակամայից պիտի առնէր մէկ կամ մէկ ու կէս օսմ. լիբայի: Այո, այդքան տեղ արժէք ունեցաւ թթենին, երբ, այդ ժամանակներում, վանում շատերը անփորձ կերպով և առանց նախապատրաստութեան որդեր դոյացրին: Այժմ վանում շերամապահութիւն ընդհանրացած է այդեանէր հայոց մէջ, բայց դարձեալ թերի միջոցներով: Եւ չը պէտք է ուրանալ, որ վանում այդ պարապմունքին առաջին հետևող եղել է հանդուցեալ Հայրապետ բէկ, որոյ 25 տարվանից առաջ տնկած թթենիի այդին—թութլուղ—տակաւին մնում է, ծառայելով այն նպատակին:

Այժմ հարցնում եմ, կարևորութիւն չը կար արդեօք ի նկատի ունենալ այս ամեն օգտակարութիւններ յօդուտ հայրենիքի բարեկաւութեան. ոչ միայն շերամապահութիւն, այլ և զանազան հարկաւորելիք արհեստներ կատարելապէս մացնել թիւրքաց Հայաստանում, հրաւիրել բանիբուն և արհեստագէտ մարդիկներ տեղական բնիկների հետ միասին և հետազօտել նախ երկրի արդիւնաբերութիւններ և ապա շարունակել գործ: Վանը իր շրջակայ գաւառներով զանազան արդիւնաբերութեանց մէջ գլխաւորը պէտք է համարել. բայց այդ ամենքը տակաւին հին նահապետական սովորութեամբ են արդիւնաբերվում:

Այդ համեստ աշխարհի համեստ հայուհիները պակաս առաւելութիւն չունին նուրբ թել մանելու, գործելու և ձեռարուեստից կրթողութեան մէջ. նոցա տղամարդիկը որքան հմուտ լինեն կտաւագործութեան մէջ, դարձեալ չեն կարող մրցել կանանց հետ. վերջիններիս գործած տնօրիկ կտաւը առանձին առաւելութիւն ունի: Այդ համեստուհիները երկար գիշերներ մեծ մասամբ անցկացնելով պարապում են այդ գործով, մատաղահասակ օրիորդ ճախարակն է պըտըտացնում, մայրը ոստանում գործում է, իսկ նրա տղամարդը կարելի է չուտով բանը թողս արած հանգիստ քընում է: Այսպէս են և մոկացի, չատախեցի, ղըշեցի հայուհիները միայն այն զանազանութեամբ, որ վերջիններիս գլխաւոր պարապմունքն է բուրդ և ֆիլիկ:

Այն ընդհանրական վնասիչ դէպքից յետոյ 1866-ի հրդեհից, երբ վանում դժբախտացան շատերը, երբ վաճառականը և արհեստաւորը ի միասին զրկվեցան իրանց նիւթական ուժից, վաճառականութեան ասպարէզ թողնելով թիւրքերին, իրանք սկսեցին ունենալ թեթև պարապմունքներ: Այդ ժամանակ բրդագործութիւնը վանում գլխաւոր տեղ բռնեց, որովհետև կերպասեղէններ և այլ կըտորները հազագիւտ դարձան. մեծամասնութիւնը համոզվեց ընդունել և հագնել երկրի իսկական մաթախից—տեղական ապրանք—վերնաշորերը—սերթուկ, պալտօ, շալվար, բաճկոն պատրաստել այդ գործուածներից, և տակի շորերը տեղական չթերից և կտաւներից: Այժմ վանում կան զանազան տեսակ տարազաւոր գործուածների և. ընկերութիւնների գործարաններ:

Տաճկա-Հայաստանի ոչ մի նահանգ, ոչ մի գաւառը այնչափ գաղթականութիւն և պանդուխտներ չէ ունեցել, որպէս Վասպուրական աշխարհ. նահանգի հայ աղգաբնակութեան մեծամասնութիւնը, կարելի է ասել, միշտ ենթարկված է եղել այդ սև օրվայ: Վանի միջին դասի երիտասարդութեան կացութիւնը ինձ լաւ ծանօթ է, որոնք յարմար ժամանակին չը մտնելով արհեստի, մանկութեան օրեր անցկացնում են իզուր: Երբ աւելի ճնշվում են նիւթական պակասութիւններից, երբ ծայրագոյն պարապութիւն ձանձրացնում է նոցա, կը տեսնես որ ամեն երկուշաբթի և հինգշաբթի օրեր—կարաւանի օրեր—նոցա բազմութիւնը խումբ խումբ, ոմանք ձիով և ոմանք հետևակ չափում են երկար ճանապարհներ: Կ. Պոլսոյ հրապարակներում և փողոցներում անգործ մարդկանց բազմութեան վրա աւելացաւ մի խումբ էլ: Էլ նորից արհեստանոց մտնել, սովորել և փող դադել երկար կը տևէ, ուրեմն պիտի դիմեն ստոր աշխատութիւնների. դաւառացին պիտի լինի համալ, մշակ, շուկաների գիշերապահ, իսկ քաղաքացի տիրուհիները պիտի լինեն խոհարար, սափրիչ և պէտք է զանազան տնական ծառայութիւններ կատարեն: Երկարատև տարագրութիւնից յետոյ ոմանք վաստակով և ոմանք դատարկաձեռն կը վերադառնան հայրենիք, դարձեալ մնալով անգործ, կամ սպառելով բերած փող կը դիմեն կրկին անգամ սովորած տեղ, Գումգափուլի սրճարաններում, այս կամ այն անկիւնում կամ շալակը ուսին կամ ածելին ձեռին: Այսքան ժամանակամիջոցում մտածենք թէ քանի քանի թարմ ուժեր կը կորչեն և կը փչանան և շատերը յաւիտեանս կը թաղվին Բաշզվայ և Բերայի զերեզմանոցներում, որը զոհեր են պանդխտութեան:

Այդ լինելի արհեստանոցներում անաւասիկ կարելի է ընդունել այսպիսիներ և թեթև վարձով պարապեցնել գործով, նրանցից պատրաստելով կատարեալ և արհեստաւոր հայ:

Վերջապէս այն բազմակողմանի օգուտներ մտաբերելով, համոզվենք արհեստանոցներ և գործարաններ ունենալու Տաճկա-Հայաստանի կենտրօնացած քաղաքներում: Այդ նկատողութեան արժանի հարցը հային իւր բազմադիմի զեղծումներից ազատելու վրկարար միջոցներից օգտաւէտն է: Եւ ի հարկէ դոցա համար անհատական ուժերը նպաստաւոր չեն լինի, եթէ չը միանան ընդհանրական կամ ընկերութեանց միջամտութիւններ: Տաճկա-Հայաստանի կենսական պիտոյքների հոգացողութեան, պանդխտութեան, տարագրութեան վերջ տալու, ընիկ հայն իւր հողին վրա արմատացնելու, և մեզ մեր շրջաբնակ բարբարոսաց համակրելի անելու օգտաւէտ է ունենալ հայրենիքում քանի մի արհեստանոցներ, որոնց օգտակարութեանց վերաբերեալ ընդարձակ տեղեկութիւններ տուեցին «Մշակ» լրագրի խմբագիր և նրա աշխատակիցներ:

Գէորգ Գ. Շերենց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻՍ, ՍԻՄԷՕՆՕՎՍԿԻ ՓՈՂՈՑ, Տ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆԻ)։

Հիւանդները ընդունվում են ամեն օր։

Առաւօտեան՝ 9—10½ ժ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—վիրաբուժութեան և վեներական հ. և ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—կանանց, երեկոյոց և ներքին հ. 10½—12 ժ. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ—ներքին հ. 12—1 ժ. աչքացաւի ԼԱՐԻՈՆՕՎ.—ամեն օր, բացի չորեքշաբթի և և կիրակի. ՐԵՑԽ—չորեքշաբթի և կիրակի։

Երեկոյեան՝ 5—7 ժ. ՈՒՇԱԿՈՎ.—երեխայոց և կոկորդի հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Զդայնի և հոգեկան հ. և էլեկտրա-բուժութեան ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ—ամեն օր և, իբր խորհրդակից նոյն հիւանդութեանց համար, Ա. ԲԱԲԵԱՆ—երեքշաբթի և շաբաթ։ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (կոնսուլտացիա)—երեքշաբթի և շաբաթ 7—8 ժամը երեկոյեան։ Դիշերօթիկ հիւանդներ։ Վարձ՝ խորհուրդ երթևեկներին—50 կոպ. կոնսուլտացիան— 3 րուբ. չքաւորները—անվարձ։

Հիւանդանոցի կառավարիչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՑ (բնակվում է նոյն հիւանդանոցում։)

Հիւանդանոցից բոլորովին անկախ պատճառներով, բժիշկ Տելեֆուսը չէ կարողանում բանալ ջրաբուժական բաժին։

(չոր. ուրբ.)

Թիֆլիսի քաղաքացիներից ի յիշատակ 1868 թ. ապրիլի 4-ին հիմնած ՀԻՒԱՆԴԱՆՈՒ դիրեկցիան պատիւ ունի յայտնել, որ հիւանդանոցի մէջ սեպտեմբերի 1-ից հիւանդները ընդունվում են առաւօտեան 9 ժամից մինչև 1-ը կէսօրից յետոյ։

Հիւանդանոցի դիրեկտոր Դ. Լիսիցեվ։

Դուրս եկաւ Մոսկվայում մամուլի տակից Հայոց Օրբելեանց իշխանների պատմութիւնը այս վերնագրով Исторія князей Орбельянъ. գինն է մէկ րուբլի։ Գնել ցանկացողները կարող են դիմել Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցը և կամ հեղինակին, որի հասցէն հետևեալն է. Москва, Лазаревскій Институтъ. Христофору Ив. Іоаннесову.

1—3

ԱՐԴԵՆ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է

և

սեպտեմբերին լոյս կը տեսնի

Ց. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

„ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ“

անունով նոր աշխատասիրութեան

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ։

ՊԱՍՏԱՌ (օբոյ) ՏԱՐՆՕՊՕԼ *եղբայրների գործարանական* **ՊԱՀԵՍՏԻ** *մէջ։*

Լորիս-Մելիքովսկայա փողոց, տ. Զուբալովի, հոգևոր սեմինարիայի հանդէպ։

Ստացված է մեծ քանակութեամբ **ՊԱՍՏԱՌ** (օբոյ) 12 կոպէկից մինչև 5 րուբլ ՐՈՒԼՕ։

Քանակութեամբ գնողներին ԶԻՋՈՒՄՆ կը լինի։

13—25

«ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ»

Հրատարակութեամբ լոյս տեսաւ և վաճառվում է Թիֆլիսի հայգրավաճառների մօտ ընտիր մատենագիրք՝

«ԱԴԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»

524 երեսից բաղկացած։ Գինն է 1 րուբլի։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել նա և վարչութեան դրասենեակը, այս հասցէով՝. Въ Правленіе Тифлисскаго общества изданія армянскихъ книгъ». Фрейлинская улица, домъ С. Корганова, № 4.

„ԱՂԲԻՒՐ“

Կէս տարվայ բաժանորդագրութիւնը շարունակվում է։

Կէս տարվայ բաժանորդները կը ստանան նաև №№ 4—6, որովհետև Հարֆիլդի կենսագրութիւնը, որ շարունակվելու է հետևեալ համարներում էլ, սկսուել է տպագրուել № 4-ից։

Կէս տարվայ բաժանորդագինը 2 րուբլի է։ Պօլսում «Աղբիւրին» կարելի է ստորագրուել «Բուրսատան Մանկանց» հանդիսի խմբագրատանը։



ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ից ԵՐԵՒԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵԼՈՒ Է

ԼԵՒՈՆ ԹԻՒՍԻԿԵԱՆՑԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱՆ

Ընդունելութիւնը սկսվում է Օգոստոսի 15-ին. երեխայք ընդունվում են՝ դիշերօթիկ և երթևեկ. մանրամասն պայմանները կարելի է իմանալ իւրաքանչիւր օր պրոգիմնազիայում, Թարխանովսկի փողոցի վրա ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼԻՔՕՎԻ տանը։

7—10

Փնտռում եմ **ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՄԲ** պարապելու **ՏԵՂ** կրկնակի իտալական և հասարակ մեթոդայով **ՀԱՅՈՑ** կամ **ՌՈՒՍԱՑ** լեզուներով **ԵՐԵԿՈՅԵԱՆ** 7 ժամից յետոյ **ԶԱՓԱՒՈՐ** ռոճիկով։ Հասցէս Զուբալովի քարվանսարայ, Գասպարեանցի մագազինում։ Նոյնպէս սովորեցնում եմ աշակերտներին ամեն ժամանակ։

Սմբատ Գետատարեանց.

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իր ուսման ընթացքը ռուսաց օրիորդական գիմնազիայում և պարապել է հայոց ուսումնարաններում ՉՈՐՍ ՏԱՐԻ ուսուցչուհութեամբ թէ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶՈՒՄ և թէ ԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒՄ,—ցանկանում է դաւառական քաղաքներից մինում ուսուցչուհութեամբ պարապել։ Պայմանների մասին դիմել պ. Զ. Գրիգորեանցի գրախանութը։

4—10

ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՎԵՐԱՏԵՍՉԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ ԹԻՖԼԻԶՈՒՄ

Սօլօլակի և Բաիշչեվսկի փողոցների անկիւնում, Աղէքսանդր Ղորղանեանցի տանը, № 21

Առևտրական կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ այն երկու սեռի անձանց, որոնք որ կամենում են իրանց վաճառական գործունէութեանը նուիրել։

Կուրսերը կունենան երկու բաժին՝ մեծագոյն միամեայ դասընթացքով և փոքրագոյն երկամեայ դասընթացքով։

Ասանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական ցնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն, 4) Առևտրական թղթակցութիւն և 5) Առևտրական կանոնագրութիւն։

Տարեկան վարձը մեծագոյն բաժանման համար 125 րուբլի է. իսկ փոքրագոյնի համար 75 ր.։

Կուրսերի մանրամասն կանոնները և ծրագիրը թէ ռուսերէն և թէ հայերէն լեզուով կարելի է ստանալ ձրիապէս հիմնադրի բնակարանումը, եղբարց Ծովիանովների առևտրական տան գրասենեակում և „Մշակ“ լրագրի խմբագրութեան մէջ։

Օտարաքաղաքացիք նոյն կանոնները և ծրագիրը ստանալու համար պէտք է դիմեն բացառապէս հիմնադրին վերոյիշեալ հասցէով։

Ընդունելութիւնը ցանկացողների համար լինում է ամենայն օր 6 ժամից մինչև 8 կէսօրից յետ։ Նոյն ժամանակամիջոցում կարելի է հիմնադրից բացատրութիւն ստանալ կուրսերին վերաբերեալ բոլոր հարցերի մասին։

Հիմնադիր „Առևտրական կուրսերի“ Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ

Աշակերտների ընդունելութիւնը կը շարունակուի միայն մինչև 15-ն սեպտեմբերի։

9—15 (2)

Դուրս եկաւ մամուլի տակից **ԴՐ. ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ**

Քաղաքատնտեսական դասախօսութիւնների առաջին տեսը

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ և ԱԶԳԱԲՆԱԿԶԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Գինն է 40 կոպէկ

Ցանկացողները թող բարեհաճեն ստորագրուել **ԲՈԼՈՐ ԵՕԹԸ** *դասախօսութիւններին, վճարելով միայն 1 ր. 50 կ.։*

Դիմել **ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ և ԿՈՎԿԱՍԵԱՆ** *գրավաճառանոցները և* **„ՄՇԱԿԻ“** *խմբագրութեանը։*

1—10 (1)



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

Ճանապարհորդների գնացքներ Բաթումի և Բագուի մէջ

Կայարան	Գալիս է ժամ. բոպէ.	Գնում է ժամ. բոպէ.	Կայարան	Գալիս է ժամ. բոպէ.	Գնում է ժամ. բոպէ.
Բաթում. .	—	8— „ առ.	Բագու. . .	—	10—23 առ.
Սամտրեդի.	12— 2	12—18	Գանձակ . .	12—20	12—48 գիշ.
Ռիոն . . .	1— 9	1—22	Թիֆլիս . .	7—49	8—31 առ.
Սուրամ . .	6— 8	6—11 երեկ.	Գօրի . . .	10—56	11— „
Միխայլօվո.	6—23	6—33	Միխայլօվո.	12—26	12—46
Գօրի . . .	7—53	8— 2	Սուրամ . .	12—58	1— 1
Թիֆլիս . .	10—25	11—11	Ռիոն . . .	5—54	6— 9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամտրեդի.	7— „	7—20
Բագու. . .	8— 8 երեկ.	—	Բաթում. .	11—21 երեկ.	—



Մի հոգու համար 8 րուբլուց, երկու հոգու համար 14 ր., մահիճներ ծովային խոտով լցված 6—9 ր. **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։** *Նոյն տեղը մեծ քանակութեամբ* **ԱՄԱՆՆԵՐ**, *դանակներ պատառաքաղներ և երկաթէ* **ԳՐԻԶՆԵՐ**, *կողպէքներ, թերիվ, տղամարդկերանց և կանանց* **ԹԱՄԲԵՐ**, *մատուցարաններ,* **ԿԼԷՕՆԿԱ**, *ըէվոլվերներ,* **ՀՐԱՑԱՆՆԵՐ**, *ալբոմներ, կոնֆեկտներ, թէց 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ։*

79—100

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻԶՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա։



Միակ գործակալութիւն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ**։ *Նոյն տեսակ ձեռագրեքանակութեամբ ամեն ձևի 25% ուրիշ տեղ։ Կան թուղթ, տետրակներ, քարեգրիչներ, քսակամաններ, մկրատներ, խալիսրոցներ, խալիսամահճակալ, վերհամար իրեր, գոներ, մատուցարաններ, բրիտանական մետալից իրեր, լապտերներ, գդալներ, բաժակներ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօտակգլխի, երկաթէ թելերից, ձիու համար։ Մակենաշներ։ Բժշկական թուղթ վատերկլօզետի համար և այլն և այլն։*

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ։

36—100

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Августа 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.